Ու գետակներն ափնածիր:
Արե՛ւ, մե՛զ ալ ոսկեզօծէ,
արե՛ւ, մե՛զ ալ, ա՛հ, մե՛զ ալ...

Ոսկի թոյրեր սրսկեցիր
Բլլուրներու կողն ի վար.
Փայփայեցիր հողմավար
Դաշտերուն վարսքը ցանցիր:
Արե՛ւ, մե՛զ ալ գգուէ մօտէն,
արե՛ւ, մե՛զ ալ, ա՛հ մե՛զ ալ...

Ոսկի մատիկդ հըպեցիր
Եւ համբոյրիդ դըրիր բոց,
Իրիկուան մէջ այս հեշտին,
Մարիներուն ու մարդոց,
Աղջիկներուն՝ կաթնաձիր
Ու վարդ մըշուշ ճակատին:
Արե՛ւ, մե՛զ ալ ողջագուրէ,
արե՛ւ, մե՛զ ալ, ա՛հ, մե՛զ ալ...

Ոսկի կեա՛նքը մեզ տըւիր.
Եւ առանցքը դուն եղար
Մեր աւիշին հոծ տենչին.
Տակաւին մի՛ բաժնըւիր
Եւ հնչեցուր ոսկելար
Անհուն քընարդ՝ հե՛ղ մըն ալ.
Ուզէ քիչ մը յամենալ,
Համբուրե՛լ մեզ վերըստին:
Ու չը ծագած դեռ ջնջին,
Բայց անգորով ու ցրտին
Լոյսն անհունէն մոլորած
Լուսաւորին առաջին
Կենսաւէտէ մեզ ամէնս ալ,
արե՛ւ, ամէ՛նս, ամէ՛նս ալ...

28. Կ'ԵՐԹԱՅ ԱՐԵՒՆ ԻՐ ՁԱՏԻԿԻՆ...

Կարմիր, նախշուն հաւկիթի պէս
Կ'երթայ արեւն իր Ձատիկին.